## Արձանագրություն N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հայկ Սարգսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ,

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

**1. <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/36>> ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2019թ.-ի նոյեմբերի 25-ին, ժամը 10:00-ին:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «ՍՅՈՒՈՒՄԱ» ՍՊԸ |
| 2 | «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ |

**2.1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ.**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Տնտեսող լամպեր | 397800 |
| 2 | Տնտեսող լամպեր | 384800 |

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային ծրարում /այսուհետ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտ/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայության մասին.**

**3.1** «ՍՅՌՈՒՄԱ» ՍՊԸ-ի և «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են իրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացրած հայտի կազմման՝ իրավերով սահմանաված վավերապայմաններին համապատասխանության մասին.**

4.1. «ՍՅՌՈՒՄԱ» ՍՊԸ-ի և «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են իրավերով սահմանաված վավերապայմաններին համապատասխան, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5.Մասնակիցների առաջարկած գներն են՝**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. «ՍՅՌՈՒՄԱ» ՍՊԸ | | | 2.«Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Տնտեսող լամպեր | 481950 | 96390 | 578340 | 459000 | 91800 | 550800 |
| 2 | Տնտեսող լամպեր | 390812.5 | 78162.5 | 468975 | 394420 | 78884 | 473304 |

6. 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքներիի՝ գնման հայտով սահմանված գները, ուստի հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով վերոնշյալ մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովը որոշեց.**
Միաժամանակյա բանակցություններ վարելու հանգամանքով պայմանավորված՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2019թ. նոյեմբերի 27-ին՝ ժամը 11:00-ին՝ Դատական դեպարտամենտի շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝ Հայկ Սարգսյան

Էդգար Մելքոնյան

Ավետիք Ավագյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան